

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզովով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խաւարանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ Է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԵՐԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ
ՔԻՆԻՆ. Մամուլ. Սրատովում են. Նամակ Ա.
խաղաղութիւն. Նամակ Օշականից. Ներքին լու-
րեր.—ԱՄՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Պատերազմի
շուրջը.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԻՆԻՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՅԻՆ. Կոնկորդանտ:

ՔԱՂԱՔԱՎԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հեռագիրը երէկ տեղեկացրեց մեզ, որ
գերմանական քաղաքականութիւնը նոր
նուաճումներ է արել Փոքր-Ասիայում:
Անատոլիական երկաթուղիների վարչու-
թիւնը արտօնութիւն է ստացել Բադ-
զադի շրջանում նախահանքեր որոնել և
գտած նախահանքերը շահագործել քառա-
սուն տարվայ ընթացքում: Հեռագիրը ա-
ւելացնում է, որ եւրոպական միւս պե-
տութիւնների ներկայացուցիչները երկու
տարի շարունակ աշխատում էին իրանց
ձեռքը գցել այդ արտօնութիւնը, բայց
այն, ինչ որ նրանք չէին կարողանում
աշուղեցնել, այժմ յանկարծ աշուղեցնում
է Գերմանիան:

Անկասկած, իւրաքանչիւր պետութիւն
ջանք է գործ դնում կարելիին չափ մեծ
արտօնութիւններ շահել իր առևտրի և
արդիւնադրութեան համար: Եւ ան-
ցեալի պատմութիւնը ցոյց է տալիս, որ
եւրոպական պետութիւնները իրանց մրց-
ման մէջ յետ չեն մնում միմեանցից:
Սակայն ցաւ է նկատել, որ գերմանա-
կան քաղաքականութիւնը արտօնութիւններ
է շահում թիւրքիայում յաճախ այնպիսի
ժամանակ, երբ թիւրքիան չէ կատարում
իր միջազգային պարտաւորութիւնները և
ամեն տեսակ միջոցներ է որոնում խու-
սափելու իր այդ պարտաւորութիւններից:

Արդարև, վերջին տասն-տասնինգ տա-
րիների ընթացքում, թէ Բալկանեան թե-
րակղզում, թէ Յունաստանի սահմանա-
գծի մօտ, թէ Փոքր-Ասիայում տեղի ու-
նեցան մի շարք տխուր և դժբաղդ երե-
ւոյթներ, որոնք արդենք էին այն բանի,
որ թիւրքիան ցանկութիւն չունէր բա-
րեկարգութիւններ մտցնել իր երկրի մէջ

ԲԱՆԱՍԻՐԱՅԻՆ

ԿՕՆԿՕՐԴԱՆ

(Մի պատմական անկար)

IV

Յեղափոխութեան նոր ստեղծած կարգերից
շատերին Նապոլեօն օրինական ձև տուեց,
իսկ շատերն էլ ոչնչացրեց և վերականգնեց
հինը, բայց ինչպէս Նապոլեօն ինքը յեղա-
փոխութեան զաւակն էր—սոված ու դա-
տիւրաբար վաճառ էր նրա սկզբունքներով: Որքան
էլ նա վերադառնար դէպի հինը, էլի նրա հա-
կացած հինը շատ բան կունենար իր մէջ յեղա-
փոխութիւնից:

Այդ տեսակի հարցերից մէկն էր եկեղեցու
հետ վարվելու խնդիրը:

Նապոլեօնը և Պիոս VII պապը 1801 թի-
վոյիսին կնքեցին իրանց հռչակաւոր կոնկոր-
դանտը, որով համարեա անփոփոխ կառավար-
վում է երկիրը մինչև օրս:

Այդ կոնկորդանտով եկեղեցու պաշտօնեաները
զաւոնում էին «բիւրօլօրա»—չիմովիկ. նրանք
կանոնաւոր ուժիկ պէտք է ստանային պե-
տութիւնից:

Յեղափոխութիւնից առաջ եկեղեցիներն ու-
նէին հսկայական հողեր: Ամեն մի կաթողիկոս
մի աւատական իշխան էր: Յեղափոխութեան
ժամանակ հոգևորականութեան այդ բոլոր հո-
գերը խնդին, դարձին «ազգային կալուած»
և ազնուականութեան հողերի հետ միասին
բաժանեցին մանր մասերի և ծախեցին ֆրան-
սիացի բազմաթիւներ իւր մասնաւոր սե-
ռից:

և վերջ դնել դժգոհութիւնների պատճառ-
ներին: Եւ եւրոպական պետութիւնները
յաճախ յիշեցրել են թիւրքիային նրա
պարտաւորութիւնների մասին: Միայն
ձեռնպահ է մնացել Գերմանիան և իբրև
վարձատրութիւն ստացել է մի շարք ար-
տօնութիւններ թիւրքիայում:

Քաղաքական ուրիշ երեւոյթներից ար-
ձանագրենք այն, որ անդիակաւն արշա-
ւանքը Տիբեթում հասաւ ծրագրած նպա-
տակին: Տիբեթի կառավարութիւնը ստո-
րագրեց դաշնագիր, որով ընդունեց կա-
նոնաւոր յարաբերութիւնների կազմա-
կերպվելը Անգլիայի հետ և դրանով ճա-
նապարհ բացեց սնդիկական ազդեցութեան
համար այդ երկրում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

«Գոյութիւն ունի արդեօք «հասարակա-
կան կարծիք» կոչվածը: Բերլինի դատաւորներից
մինը, այժմ վախճանված, երբ նրան դիմեցին
այդպիսի հարցմունքով, պատասխանեց. «Հա-
սարակական կարծիք. ես այդպիսի հասկացողու-
թիւն չը գիտեմ»: Դրանով նա կամեցում էր
ասել, որ, իրապէս, չը կայ հասարակական
կարծիք, կամ հասարակական կարծիք ոչ մի
ազդեցութիւն չունի կեանքի ընթացքի վրա:

«Որքան դժբախտ կը լինէր այդ դատա-
ւորը—դրում է «Рус. Вѣд.» լրագրի Բերլինի
թղթակիցը — եթէ նա ապրած լինէր մինչև
մեր օրերը և այժմ ակնաստեա լինէր, թէ
ինչպէս գերմանական կայսրուհու հօֆմէյս-
տէրն ընկաւ իր պաշտօնից լրագրիների պա-
հանջով, որոնք արտայայտում էին երկրի մե-
ծամասնութեան կարծիքը: Հասարակական
կարծիքը արքան զօրեղ է այժմ, որ կառա-
վարութիւնը ստիպվեց դիմել նրա առաջ և
հետեցնել պաշտօնից իր բարձրաստիճան պաշ-
տօնեաներին, սկսած հօֆ-մէյստրից մինչև մի-
նիստրը:

Բերլինի դատարանում ընմում էր հողային
բանկի վարչիների դատը, որոնք մեղադրվում
էին գեղծումների մէջ: Դատավարութեան ժա-
մանակ յայտնվեց, որ կայսրուհու հօֆ մէյստր

փականութիւն, իսկ այդ ձեռք բերված փողով
վարեցին յեղափոխութեան սկսած հսկայական
պատերազմները: Նապոլեօնի կոնսուլ դարձած
ժամանակն այդ հողերի մեծ մասն արդէն
ծախված էր: Իսկ մնացած չնչին մասը կոն-
կորդատը վերադարձրեց կաթողիկոսներին:
Արդէն օտարացած կամ ծախված կտորների
մասին խօսք անգամ չէր կարող լինել:

Առաջին կոնսուլն իրաւունք ստացաւ նշա-
նակելու թեմերի արքեպիսկոպոսներին ու ե-
պիսկոպոսներին: Պետութիւնը նշանակում է
իր ուզած անձին, իսկ պապը տալիս է նրան
կանոնական կամ եկեղեցական հաստատու-
թիւն: Մանր պաշտօնեաները նշանակում են
թեմականների կողմից, միայն թէ առաջնորդն
ստանալու է կառավարութեան թոյլտու-
թիւնն այս կամ այն անձին նշանակելու հա-
մար: Կառավարութիւնը կարող է առաջարկված
անձին չը հաստատել:

Ամեն մի մարդ, երբ սքեմ է հաղնում, երբ
ոտ է դնում հողերը ասպարէզ, երգվում է
հաւատարմի մնալ երկրի կառավարութեանը:
Նապոլեօնի կոնկորդանտով ասված էր, երգ-
վում է հաւատարմի մնալ և աղօթիլ եկեղե-
ցում «հանրապետութեան և կոնսուլի համար»:

Կոնկորդատի այդ կէտը ժամանակի ընթաց-
քում յարմարվեց երկրում գոյութիւն ստացած
կառավարական բոլոր ձևերին:

Այդ էր կոնկորդատի էութիւնը և այդ էլ
գործողութեան մէջ մտաւ 1802 թիւ ապրիլ
ամսին: Բայց կոնսուլն իսկույն զգաց, որ թե-
րի էր իր կոնկորդատը: Նոյն թիւն նա հրա-
տարակեց «օրդանական յօդուածներ» կոչված
կանոնները եկեղեցու գործերի վերաբերու-
թեամբ: Նրանց էութիւնը հետեւեալն էր: Ա-

Միւրախը շատ սերտ յարաբերութիւններ է
ունեցել այդ վարչիների հետ և զանազան
կասկածելի աֆէրիստներից փողեր է հաւա-
րել: ճիշդ է, այդ փողերը նա իր օգտի համար
չէ հաւաքել և անձնական շահ չէ ունեցել, այլ
գործադրել է զանազան եկեղեցիների շինու-
թեան վրա, բայց աֆէրիստները, վախելով
այդպիսի մի բարձրաստիճան պաշտականի և
արխանսկիների հովանաւորութիւնը ու բարե-
կամութիւնը, կարողացել են պղտոր ջրում
բազմաթիւ ձկներ որսալ: Հէնց որ այդ մեր-
կացուիները յայտնվեցին, գերմանական մա-
մուլի բոլոր անկախ օրգանները սկսեցին միա-
րեւան աղաղակել, թէ հօֆ-մարշալը ոչ միայն
իր պատիւն է վտանգել եկեղեցիների, այլ և իր
բարձր պետերի պատիւը: Ի հարկէ, բոլոր
պաշտական բարոյգիշերը և բողոքականու-
թեան սիւները պաշտպան հանդիսացան Միւ-
րախին, շեշտելով այն հանգամանքը, որ նա
անձնական ոչ մի շահ չէ ունեցել, այլ դրամ-
ները ստացել է յօդուած զանազան բարեգործա-
կան և եկեղեցական հաստատութիւնների, ո-
րոնց նախագահն է եղել: Սակայն կայսրը
կարգադրեց, որ Միւրախը հրաժարական տալ
բոլոր իր պաշտօններից: զբաղուի նա կամե-
ցաւ հասկացնել, որ ինքը հակառակ է նուէր-
ներ հաւաքելու այն եղանակին, որ մինչև
այժմ գործադրվում էր:

Եւ ոչ միայն հօֆ-մարշալ Միւրախը, այլ և,
ինչպէս խօսվում է լրագրիներէ մէջ, գուցէ
նաև ներքին գործերի մինիստր բարոն Հիմ-
մերշտէյնին առաջարկվի հրաժարական տալ:
Երբեք էլ, որ հօֆ-մարշալ Միւրախը ուսու-
կանութեան օրգաններին միջոցով կոչ է արել
զանազան հարուստներին և դրամատէրերին
մի որոշ գումար հաւաքել և կայսրին ու կայս-
րուհուն ներկայացնել նրանց արձաթեա հար-
սանիքի առաջիկայ տօնախմբութեան ժամանակ:
Վերջէլ մի Կայսրի յիշատակին կառուցված եկե-
ղեցու զարդարանքը համար: Ի հարկէ, կայսրը
սաստիկ անբաւական է մինիստրից, որ թոյլ
է տուել իրան այդպիսի կոչ անել ուստիկանու-
թեան ձեռքով:

Ոչ նուազ վրդովմունք է յայտնում և հա-
սարակական կարծիքը, որովհետեւ մինիստրը
այդպիսի վարմունքով միայն արջի ծոռայու-
թիւն է մատուցել կայսրական տանը:

Իսկ կառավարութեան թոյլտուութեան ոյժ
չին կարող ունենալ պապի արած կարգա-
դրութիւնները, օտար սինօդների և նոյն իսկ
տիեզերական ժողովների որոշումները: Առանց
կառավարութեան պաշտօնական թոյլտու-
թեան Ֆրանսիայում չին կարող գործել Պապի
պատուիրակները (լէգատներ, նունցիաներ և
այլն): Առանց նոյն թոյլտուութեան հոգևորա-
կանութիւնն իրաւունք չունի տեղական կրօ-
նական ժողովներ անել:

Երկրորդ յօդուածը վերաբերվում էր ամուս-
նութեան կամ պսակի խնդրին: Յեղափոխու-
թիւնը մտցրել էր քաղաքացիական պսակը և
Նապոլեօնը պիտի պահեց այդ գեղեցիկ նոր-
մուծութիւնը: Օրգանական երկրորդ յօդուածը
պահանջում էր, որ կրօնական պսակադրու-
թիւնից առաջ նոտարի մօտ կնքվի քաղաքա-
ցիական պսակի թուղթը:

Պապը բողոքեց Նապոլեօնի այդ կանոնների
դէմ, բայց ոյժը իշխողի ձեռքն էր, նա էլ
գործադրում էր կեանքի մէջ իր ուզածը:

Օրգանական յօդուածներից առաջինը Գալ-
լիկան եկեղեցու ինքնուրոյնութիւնն էր պաշտ-
պանում:

Վրա հասաւ ընտանաւորային: Բուրբունները
վերադարձան: 1819-ին մի նոր կոնկորդատ
կնքվեց, աւելի ձեռնառու Պապի համար: Ֆրան-
սիայի թեմերի վրա աւելացան 19 նոր թե-
մեր: Ազգային ժողովները բողոքեցին, բայց
նրանք ձայնը լսող չեղաւ:

Յուլիանեան միապետութիւնը և Նապոլեօն
III-ի կայսրութիւնը կամայ-կամաց ոչնչաց-
րին Գալլիկան եկեղեցու անկախութիւնը և
Ֆրանսիան դարձաւ իսկապէս կաթօլիկ: Մի-
բան միայն մնաց—1801 թիւ կոնկորդատը:

Եւ երկու բարձրաստիճան պաշտօնեաները
ստիպված են տեղի տալ հասարակական կար-
ծիքի առաջ:

Պ. Միւր. Թամաշեան Պարբիցի «Нов. Обоз.»
լրագրում գրած իր մի յօդուածի մէջ խօսում
է այն գովասանքների մասին, որոնց այժմ
արժանանում է հայկական կեանքի ամեն մի
լուրջ ուսումնասիրութիւն, եւրոպացի գիտնա-
կանների կողմից: Մեր ընթերցողները գիտեն
պ. Ա. Չօրանեանի «Chants populaires Armé-
niens» աշխատութիւնը, որ արժանացաւ Լանդ-
լուայի մրցանակին: Այդ աշխատութեան ա-
ռիթով, պ. Չօրանեան ստացել է համակրա-
կան քննադատութիւններ Բրայսից, պրօֆէ-
սօր Մէյլից, կոստ Վանդալից, ֆրանսիական
ակադէմիայի անդամ Լ. Դը-Կոստենտինից և
ուրիշներից:

Բրայսը ցոյց է տալիս հայոց ժողովրդական
բանաստեղծութեան չքնադատութիւնը և թար-
մութիւնը, պահպանած լինելով մի և նոյն
ժամանակ իր ինքնուրոյն ազգայնական ընա-
ւորութիւնը: Թէև նրա վրա կայ որոշ արեւե-
լեան կնիք, բայց զգացմունքի իրական խո-
րութեամբ, այդ բանաստեղծութիւնը սաստիկ
տարբերվում է պարսկական բանաստեղծու-
թիւնից:

Կոստ Վանդալը գրում է, որ նա մեծ հա-
ճոյքով կարդաց Չօրանեանի թարգմանած
բանաստեղծական արտադրութիւնները, որոնց
մէջ լավում են մի ամբողջ ազգի երգը և հոգու
լացը:—Լ. Դը-Կոստենտին ցոյց է տալիս, որ
հայերի ժողովրդական երգերը, լի հմայով,
վկայում են, որ շատ կողմերից այնքան հա-
մակերկի հայ ժողովուրդը բանաստեղծական
հոգի ունի:

Բոլոր այս վկայութիւնները ցոյց են տա-
լիս, որ պ. Չօրանեանի ձեռնարկած գործը
ժանօթացնել եւրոպական հասարակութիւնը
հայ գրականութեան արտադրութիւնների
հետ, անկասկած օգտակար և խրախուսանքի
արժանի գործ է:

Նոյն յօդուածում, պ. Թամաշեան յայտնում
է, որ Պարբիցի Ասիական ընկերութեան մէջ
պ. Բամաշեանը նորբա կարդաց մի բեֆե-
րատ էսթրադական լիզուի հայերէնի հետ ու-
նեցած նմանութեան մասին: Դեռ 1895 թ.

V

Կաթօլիկ հոգևորականութիւնը մի այնպիսի
բոյս է, որի մէկ հատիկն անգամ չուտով կա-
ճէ, կը բազմանայ և կը խեղդէ շրջապատի
բոլոր բոյսերին: Հալածեցին եղուիտներին,
այդ հոգևորականութիւնն սկսեց գործել հա-
րիւր տեսակ միաբանութիւնների, եղբայրու-
թիւնների և կոնգրէգացիաների ձևով:

Այսօր այդ կրօնական միաբանութիւններն
իրանց ձեռքն են առել Ֆրանսիայի շատ գա-
ւառների մատաղ սերնդի կրթութիւնը և թու-
նաւորում են նրանց յետագէտ, կղերական մո-
լիսանդ հոգով:

Նրանք իրանց ձեռքն են առել մէկ միլիարդ
ֆրանկի կալուածներ, որոնք մնում են հասա-
րակութեան համար մեծած (mainmorte) և
մնուցանում միայն պարազիտ հոգևորական-
ներ—«բոյբեր» ու «եղբայրներ»: Հարստու-
թիւն զիջելու նրանց զէնքերն են բարոյը,
խոստովանութիւնը, դժոխքն ու դրախտը:

Նրանք թշնամի են երկրում տիրող հանրա-
պետական կարգերին և ամեն միջոց, ամեն
ինարիք գործ են դնում տապալելու նրան:

Ան այդ ֆիսակար կոնգրէգացիաներն է
փակում ներկայ կառավարութիւնը: Իսկ նը-
րանք տարեկան միլիոններ էին ուղարկում
Պապին: Պապը բողոքեց, նոյն իսկ շատ ե-
պիսկոպոսների դրոյն չը հնազանդվել կառա-
վարութեանը:

Նապոլեօնեան կոնկորդատը խախտված էր
Պապի կողմից, կառավարութիւնն էլ դրից
նրա փոփոխութեան խնդրէր:

Պատակ

